ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 07

07 փետրվար 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 02 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Լիլիթ Ենգիբարյանը, Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը, Հրայր Ասատրյանը :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված **«Գումար հատկացնելու մասին»** նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի փետրվարի 11-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի համայնքների միությանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2025 թվականի տարեկան անդամավճարը հատկացնելու և Խոյ համայնքի ղեկավարի օգնական Ֆրիդա Բաղդասարյանին ՝ «Աջակցություն և ուժեղացում. կանանց ֆիզիկական և հոգեբանական ինքնապաշտպանություն»» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից գումար հատկացնելու հարցը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության մշակույթի երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Հայաստանի համայնքների միությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի 2025 թվականի տարեկան անդամավճարը՝ 310310 /երեք հարյուր տաս հազար երեք հարյուր տաս/ ՀՀ դրամի չափով:
2. Խոյ համայնքի ղեկավարի օգնական Ֆրիդա Բաղդասարյանին ՝ «Աջակցություն և ուժեղացում. կանանց ֆիզիկական և հոգեբանական ինքնապաշտպանություն»» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ գումար:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
	ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ